ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՓՐԿԱՐԱՐԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Արդեն 17 տարի մեր հանրապետությունում սեպտեմբերի 4-ը նշվում է՝ որպես Փրկարարի օր:

Մեր իրականության մեջ փրկարարի դերն ու աշխատանքը կարևորվեց հատկապես 1988թվականի երկրաշարժից հետո, երբ անհրաժեշտ էր գործել արագ, գնահատել յուրաքանչյուր պահը, ինչպես նաև կայացնել ճիշտ որոշումներ՝ փրկելով հազարավոր կյանքեր:

Տարիների ընթացքում հայ փրկարարները ձեռք բերեցին մասնագիտական նոր հմտություններ ու կարողություններ, որոնց շնորհիվ և որի արդյունքում հնարավոր դարձավ մարդասիրական այս առաքելությունը կատարել լավագույնս ու մեծագույն պատասխանատվությամբ:

Անտեսելով ցանկացած դժվարություն ու խոչընդոտ՝ փրկարարները դիմակայում են մարտահրավերներին, վտանգներին ու աղետներին, որոնք չունեն ժամանակ, տարածություն, սահմանափակումներ:

Նրանք միշտ հայտնվում են ճիշտ ժամանակին՝ իրենց ամենօրյա չընդհատվող աշխատանքով դառնալով մեր անվտանգ կյանքի ու ապահով միջավայրի երաշխավորը:

Վստահաբար արձանագրում ենք, որ փրկարարներն արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու կարողության և կուտակված փորձի շնորհիվ լուծում են իրենց առջև դրված բոլոր խնդիրները՝ հավատարիմ մնալով իրենց կոչմանը:

Հարգելի փրկարարներ, արտակարգ իրավիճակներում աշխատող մասնագետներ

Իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի, վարչական ղեկավարների և համայնքի ավագանու անունից ընդունեք ջերմագին շնորհավորանքներս ու բարեմաղթանքներս ձեր մասնագիտական օրվա առթիվ:

Առանձնակի շնորհավորում եմ ՀՀ ՆԳՆ ՓԾ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության Սևանի հրշեջ փրկարարական ջոկատի ողջ անձնակազմին, մաղթում բարեկեցություն, առողջություն, անվտանգ աշխատանք, արժանապատիվ կյանք: